

1906
II
481

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պոչկարիոյ համար	12 փր.
արեկանի վեցամսայ	7 "
Արտասահմանի համար	15 փր.
վեցամսայ	8 "
Արտահայի համար	3 փր.
արեկանի վեցամսայ	1.50 "

Ծանուցում տողը ու ուղղին երեսին համար 40 սանթիմ իսկ վերջին երեսին համար 20 սանթիմ է. հրեֆեկ ս էլի սնկալեկոն համար 20 0/0 գեղը կըլլայ:

Վառիայի համար ձեռք 40 սանթիմ է

ՇԱՐՋՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳՈՅԻՆ. ՔԱՂՍՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏՎՐԱԿՈՒԹ ԶՈՐԵՎՇԱՐԻ ԵՒ ՇԱՐՋՈՒՄ ԵՐԵՎԱՆ

ОТГОВОРНИКЪ: СТЕПАНЪ КАНАРЯНЪ

իսկանի և զրուսի կի խմբագրութան հասցիքն

Редакция на вѣстникъ "Шаржумъ" Варна

Redaction du journal "Charjoum" Varna (Bulgarie)

Պոչկարիոյ համար ձեռք

15 ՍԱՆԹԻՄ

Արտասահմանի համար ձեռք

20 ՍԱՆԹԻՄ

Գրութիւնի և ջեկ տրոյ

ՇԱՐՋՈՒՄԻ ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԵԳՐԸ ՊԵՏՐ Է ԿԱՆՈՒԻ ՎՃԱՐԷ

Ս. ԳՍԲՐԻԷԼԵԱՆ

Գլխաւոր Գործակալ

ՊՈՒԼԿԱՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՆԷ ԵՐԱՃ. ԽՈՒՈՐԵԱՆ, ՍՕՅԻՄ ՔԱՂԱՔԻ ՎԻՃԱ. ԿԱԶԱՆՈՒԹԵԱՆ ՏՈՄՍԵՐՈՒՆ.

Տոմսակ գնել փափագողները կրնան իրեն դիմել Չար-Պորի փողոց Վառնա

Վարդանանց տօնի առիթով յոռաղիկայ շարքով օր ոճար. մուս՝ չի պիտի հրատարակուի:

ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅ ՄԱՍՈՒԼԸ

—(—)

Կովկասը խառնակութեանց ու արիւնի մատնուելէն ի վեր, եթէ կայ բան մը, որուն սահմանուած ապագայ փրկարար դերը կարելի է այժմէն իսկ կանխատեսել, որուն դրական ու շօշուփելի օգուտները արգէն սկսած է վայելել ամբողջ հայութիւնը և մասնաւորապէս Կովկասահայը—մամուլին ձեռք բերած համեմատական ազատութիւնն է:

Հայութեան երկու մեծ կեդրոնավայրերը, Կովկասն ու Թուրքիան, լիրբ դրաքննութեամբ կաշկանդուած, անկարող եղան իրենց կոչման արժանաւորապէս ծառայելու: Հայութեան անմիջական ցաւերը, հրատապ ու կենսական հարցերը կարելի չէր յուզել, խմբագիր ու թղթակից ստիպուած էին լուռ մնալ այն անհուն թշուառութեան առջեւ որոնց ամենօրեայ հանդիսատեսները եղած էին: Իրերու այդ դրութիւնը վերջին տասնեակ տարիներու մէջ խիստ աղէտաբեր եղաւ մեզի. և շատ մը պարագաներու մէջ մեր կրած ձախողութեանը կամ անսանձօրէն կրկնուած սխալները բացարձակապէս արդիւնք են ազատ ե հզօր մամուլի մը բացակայութեան:

Արտասահմանի մամուլը իր ամբողջութեամբ շատ խեղճ դեր

մը միայն կրցած է ունենալ այս տեսակետով: Թէեւ շատ ազմուկ հանած, մեծ իրարանցում յառաջ բերած է երբեմն, բայց գրագէտ խիստ սահմանափակ ազդեցութիւն մը ունեցած հայութեան ամբողջութեան վրայ, և ատիկա բնական էր: Արտասահմանի մամուլը իրեն համար չունէր ու չունի ալ անհրաժեշտօրէն ընդարձակ հոգը. անիկա մշտապէս փակուած կը մնար հայութեան երկու մեծ համախմբումները պարունակող երկիրներուն առջեւ: Ռուսահայուն կամ թրքահայուն վիճակը ամէն օր կը քննուէր, անով զբաղող հաստատութեանց դերութիւններն ու առաւելութիւնները կը մատնանշուէր, բայց բուն իսկ խնդրոյ նիւթ եղող տարրերը անգիտակից կը մնային այդ անցուդարձերէն լուր կրուորական դեր մը կատարելով ու կուրօրէն հետեւելով իրենց ծանօթ այս կամ այն հաստատութեան: Այս վերջինը, իր կարգին, կողմէն հանգամանքէն շահագործելու համար մայր գաւառներու հայութեան կուրուրութիւնը և անոր բախտին հետ կը խաղար կուսակցական քիչ կամ շատ արդարանալի քայլերով:

Հիմա դրութիւնը փոխուած է այլեւս: Այդ երկու հոծ կեդրոններէն մին, Կովկասը համեմատաբար լայն մամուլի ազատութիւն մը կը վայելէ. այսօր Մենք կը տեսնենք որ հայկական ցաւերը, օրուան կենսական հարցերը արտասովոր յանդէնութեամբ, յստակ ու յայտնի կերպով կը յուզուին անոր էջերուն մէջ: Կուսակցական հարցերն իսկ, որոնք գեռ քանի մը ամիս առաջ բացարձակապէս անմատչելի գետին մըն էին այդ մամուլին համար, հիմա սովորական ու առօրեայ նիւթ սկսած են դառնալ: Կովկասահայութիւնը ուղղակի, և ամբողջ թրքահայը անուղղակի կերպով, պիտի օգտուի իրաց այս նոր վիճակէն: Արտասահմանի մամուլին կողմ

նապահ օրտաէմը, պաշտօնական օտկաններու մաքրալէլական շառաւիթանութիւնները, յերիւրուած, երեւակայական գործունէութիւններու ներքոյնը չի պիտի կրնան կուրօրէն արձազանց գտնել խնդրոյ նիւթ եղող բուն հայ շահագուածին մէջ: Կովկասի ամբողջ մէկ ու կէս միլիօն հայութիւնը ու չի ունի պիտի քննէ ասկէ ետքը իրեն հրամայուած սմէն միջոց որ փրկարար պալատանի անուշով կը ներկայանայ: Թրքահայաստանի սահմանակից, անկէ հասնող զբժարախտ լուրերուն առօրեայ արձագանգը իր մամուլին մէջ գտնելով պիտի լուսաբանուի, ծագելիք անխուսափելի վէճերը, բանակուիները պիտի փարատեն ցարդ իրենց իմացականութիւնը պարունակող մշուշը: Կովկասը պատրաստուած է ազատ մամուլի կարծիքը վայելելու: մեծ թուով զարգացած մտաւորականներու բանակ մը ունի իր մէջ, որ պիտի երեւան գայ տակաւ, և իր աշխատութեան բաժինը պիտի բերէ ազգային լուսաւորութեան ու ինքնագիտակցութեան գործին:

Այսպէս, գործունէութեան նոր ու հզօրագոյն ազդակ մըն է որ երեւան կուգայ, ազգին համար: Թանկալի է որ այդ նոր ազդակը իր կոչման բարձրութիւնը պահէ միշտ և իր հզօր ազդեցութիւնն ունենայ այն բոլոր տարրերուն վրայ որոնք մինչեւ այսօր իրենց տկար ուժերուն յաւակնտօրէն կառչած կամովին սխալ ու վրտանդաւոր սխտէմներու հետեւելով, մայր հանդիսացան ազէտներու, որոնցմէ կարելի էր իրուսափել քիչ մըն պաղարիւնութեամբ, յամբերատարութեամբ ու լրջութեամբ: Կովկասի հայ մամուլը, հաւատացած ենք որ, տեսակ մը վերին քօնթրօլ պիտի ըլլայ, ասկէ հետքը. այդ կարգի կամայականութեանց և վերջ պիտի գնէ անխորհուրդ ձեռնարկներու կամ ուժերու անիմաստ վատնումին: ՇԱՅԱՊ

ԿՈՎԿԱՍԱՀԱՅ ՆԵՐԿԱՆ

—3—

Մարդկային պատմութեան արիւննոտ շրջաններէն, ու եւ ցեղ չէր անցած այսպիսի ցաւատանջ, այսպիսի եղբարական, այսպիսի ցնցող ճգնաժամ մը՝ որպիսին կանցնի այսօր ափ մը գծախտ շուտական հայութիւնը:

Հուր, սուր, թալան, աւեր, հալածանք, — Անողջ յաղորդականութիւնով, մինը միւսին ետեւէն, անդուլ թափով մը կուգան կանցնին վրայէն, առանց թոյլ տալու ինքնամփոփման հեռք մը առնելու, առանց ժամանակ տալու այս զարհուրաբեր մղձաւանջէն բոպէ մը սթափուելու: Թօթուուելու, ուշաբերուելու...

Մէկ կողմէն՝ կարմիր մահիկն է որ կը սպառնայ, իր մահասարսուտ ճամօկէսեան արիւննոտ սուրը առկախ գրած անոր հէգ գլխուն վերեւ շողարձակ: Միւս կողմէն՝ խաչագլուխ արծիւն է որ կը սաւառնի, իր անկուշտ, սուր աչքերը անքնիթ անոր վրայ...

Ու հարուածները կիջնեն, աջէն ու ձախէն. — Արեւելքի խոր անկիւնները, ինչպէս եւ լուսաւորութեան ամենամօտիկ շեմին վրայ, այս մըլտահալած, մշտաչարքար, մշտակոծ, այլեւ, միշտ կենդանի, գօտեպնդուած ու անսայթաք յառաջ վազող ճանապարհորդին գլխուն. — ճանապարհորդ մը՝ որ անխոնջ կը քալէ դէպի նպատակի մը, իտէալի մը եւ փարոսի մը՝ որ կը պլպլայ շատ հեռուն, աղօտ, գեւահար, օրհասական, բայց ոչ մարած փարոսի մը...

Ո՞վ պիտի հաւատար՝ որ բարբարոս, արիւնառու, վայրագ ու հակամարդկային թուրք ուժիմին տակ հեծեծող հայութեան մէկ այլ հատուածը, նոյնքան հսկայ զանգուած մը, պիտի արժանանայ «քրիստոնեայ, լուսաւոր, քաղաքակիրթ» ցարի մը հովանաւորութեան ներքեւ այն միեւնոյն բախտին՝ որ բաժին ինկած է իր եղբարակիցներուն... Ո՞վ պիտի հաւատար թէ քրիստոնեայ հիտրա մը աւելի հրէշութիւններ ի գործ պիտի դնէր իր ափ մը հպատակներուն վրայ՝ քան ինչ որ չէր երեւակայած ընել իր պաշտօնակից

կարմիր Գագանը : Բայց այսօր կենդանի իրականություն է դա : Կովկասահայու թիւեր կանցնէ ներկայիս նոյնպիսի ահաւոր ճգնաժամ մը : Ինչպէս թուրքերոյ հայութիւնը :

Կովկասի մասին օր ըստ օրէ հասած մշուշապատ, կցկտուր տեղեկութիւնները առիթ չեն թողուր տարակոյսի : Նէվայի ստուգապատ ափէն նստող ձերմակ ձիւղը պակասը կը լրացնէ Վոսփորի կապուտագեղ բարձունքներուն վրայ բազմոց բազմաքլիեան Հրէշին : Լակոնական այլեւ հոգեմայ մտաւանջութեան առիթ տուող լուրեր են եւրոպական առաջնակարգ մամուլին օր ըստ օրէ հասնող հեռագիրները : Դրուելունը ծանր է Կովկաս : Արիւնտ ընդհարումներ հայ-թաթարական : Մեծ կորուստներ երկուստեք : Տեղական իշխանութիւնը անզօր ապստամբներու վրայ : Բազմաթիւ զիւղեր թաւանի եւ հրդեհի ենթարկուած : Անմիջական սպառնալիք սովի : Թշուառութիւն, թշուառութիւն, թշուառութիւն...

Ահա թէ ինչ է կացութիւնը : Ուերք, սթայմաքի, «Տէյլի Թէլկրաֆ»ի եւ նման հակառակորդ օրաթերթերու մանրատու թղթակիցներ կը կը բարձրացնեն սեւ, թանձր վարագործը : Կը պարզուի եղբրական պատկերը իր բովանդակ սոսկալիութեամբ :

Անցեալ տարուան փետրվարեան արիւնտ օրերէն ի վեր, չը նայելով եղբայրակցութեան եւ զիրկըղխառնումի հանդիսաւոր ցուցադրանքներուն, — Եղբայրակցութիւն եւ զիրկըղխառնում թաթար բնածին անանականութեան հետ — ընդհարումներ կանգ առած չեն երբէք : Հոս չենք ուզեր վերակրկնել ամենուն յիշողութեան մէջ դեռ եւս թարմ են Շուշիի, Նախիջեանի, Երեւանի, Գանձակի եւ այլ կողմերու, ինչպէս եւ այս պահուս թիֆլիսի ահաւոր սպանիւնները...

Ունձ, թափառական ազգ, — հարուած ու հալածանք իսլամէն : հարուած ու հալածանք խաչապատէն : Բայց եւ այնպէս, կան մարդիկ, հայեր, որ քու այդ սեւ ճակատագիրը անտեսելու չնկան խիզախութիւնը կուենան, քեզ ուրանալու լիրք վիժանքը կը ճգնեն, ու քեզ այդ անկարելի դրութեան մէջ, անքան զրացիներուդ եւ անյագ զահիճներուդ առջեւ յանցաւոր կը հանեն, կը մեղադրեն քեզ որպէս ճնշող, կը կը դատափետեն քեզ իբրեւ հարստահարող()...

Մարդ կարող չէ զուպել զայրոյթի ու նողկանքի այն հզօր ժայթքումը բոլոր անոնց հանդէպ, որ դեռ երէկ հատորէ մը երկու-երեք ֆօրմիւլ գոց ըրած, այսօր իրենց ճանձող ուղեղով կուզեն համալիրաբանի ինչ հոգի անել, «Նացիօնալիզմի» դէմ վճիռներ արձակել, «սօցիալիզմի» դէմ մօկրատիա քարոզել, տարաբախտ ցեղի մը սրբանուէր մարտիրոսներու յիշատակին վրայ իրենց սխեղծ հօգիւն սեւեռութիւնը թափել, քֆրել անոնց՝ որոնք «ոճիւր» գործած էին լոնտոնը պաշտպանել :

Կը հարցնենք այդ սօցիալ տէմօկրատ Եղիշիներուն եւ մարքսակուր երանելիներուն : — Ինչ կընէր սօցիալ դէմօկրատիա ըստածը՝ երբ հայութեան է՛ն նուիրական սուրբ իրաւունքները կը յափառուէին ձեռքէն : Ինչ կընէին «սօցիալ դէմօկրատ

տիառի բազմազանները՝ երբ ամբողջ ժողովուրդ մը Բարթուղիմէոսեան գիշերներու մղձաւանջներ եւ իրականութիւններ կանցնէր, եւ ինչ կընէին՝ երբ միեւնոյնը կը կատարուի այս պահուս...

«Նացիօնալիստական ֆանատիկ սուրբիւն» գոչեցին առաջինին : ասէպարատիզմի հոգի կը վայրահանեն ներկային, եւ ատոնք որ տիեզերք զաւտագրելու (սիլ) յաւակնութիւններ ունին, ահա թէ ինչպիսի գիրք կը բռնեն հայ արիւնտ ներկային առաջ :

Մանր, ծանր, ճակատագրական օրէն ծանր է Կովկասահայ ներկայիս : Բայց, բնա՛ւ յուսահատեցուցիչ, բընա՛ւ վհատեցնող, բնա՛ւ լքող, Ընդհակառակը, Կովկասահայ գիտակից երիտասարդութեան ընդդիմադիր թափերը կրկնակիօրէն կը սրտապնդեն թոյլ հոգիները : Եւ կը բացայայտեն մեզ՝ թէ մեռած չէ հայութեան մէջ ազգային ինքնագիտակցութեան գաղափարը, իր ազգային ամբողջականութեան վսեմ իսկալը, ինչ ալ փոխեն ոմանք, ինչ ալ դուրս տան իրենց արգահատելի խելապատակէն :

Կովկասահայը, մէկ կողմ նետելով համալիրաբանի ու իրեն անմարս ֆուսիները, ունենալով հանդերձ ամեն անակնկալ պատահարի համար ինքնապաշտպան պատրաստ դրութիւն, պէտք է գիտնայ պահել ու պահպանել նաեւ իր ազգային իրաւունքները ամէն բանէ վեր ու աւելի, որովհետեւ, ինքնազուխ ամբողջութիւն մը չէ՛ ինք, այլեւ մէկ մասնիկը, արեւակիցը, վշտակիցը, բաղդակիցը ու ինչ զանգուածի մը՝ որ աչք ու մտածում իրեն սեւեռած եւ որուն նեցուկ հանդիսանալ պարտաւորուած է մարդկային, ցեղային ու եղբայրակցական ամէն մէկ պարտաւորեցուցիչ սեպակէտներով :

Մ. Տոչակ

ՕՐԸ ՕՐԻՆ

Այս վերջին ժամանակներս, պալլաքանան թերակղզին՝ զաւելտփխառն ողբերգութեան մը թատերաբեմը եղած է :

Օր նոր, տեսարան նոր Պահ մը սեւ սեւ, կայծակնայից ամպեր կը կուտակուին շատ մութ, սարսազ դեցիկ, պայթելու եւ ամէն բան ոչնչացնելու մօտ ու քիչ յետոյ ամէն բան կը խաղաղի ու կանուխ առջի երեւոյթը :

Ո՛ր միացին այն սպանալից ազդարներն որ պուլկարական կատու վարութիւնը առանց չունչ սոնետու կը թափէր թուրքերոյ գլխին : Բոլոր աշխարհ ժամէ ժամ կը սպասէր թուրքի եւ պուլկար յարաբերութիւններու խզումին, նոյն իսկ պատերազմի : Սակայն ամէն բան անցաւ : Թուրքերոյ Բարիգի դեսպան Միւնիւր փաշայի Սօֆիա գալը, անոր եղած սիրալիր ընդունելութիւնը ամէն ինչ կերպարանափոխեց, կըսեն թէ՛ Միւնիւր քաջան պաշտօն ունէր, մօտէն լուսաբանուի ու լուսաբանել իր կառաւարտին համար : Սերպ-Պուլկար մաքսային համաձայնութեան մասին, եւ վերջերս ծագած թուրք ու պուլկար մաքսային անհամաձայնութեան վերջ մը տալ, եւ ասիկա կը հետեւցնեն, իր վաճառականութեան եւ ելեւմտից

նախարարներու հետ ունեցած երկարաթեւ տեսակցութենէ : Այսպէս ալ պէ՛տք է հաւատալ ա՛րդեօք : Շատ տղայական պիտի ըլլար :

Միւնիւր փաշայի Սօֆիայի արքունիքին ըրած այցելութիւնը, աւելի ենթադրելի է որ եղած ըլլայ թրքապուլկարական թշնամական ընթացք բարեփոխել, եւ բարեկամական կապեր հաստատել առայժմ մինչեւ որ Սուլթանեան կայսրութեան կարմիր ծովու ափերէն փչած խորշակը ու պարսկական մրրիկը խաղաղի :

Թուրքիան կուզէ ամէն գնով երկրիս իշխանութիւնը քննարկել զէթ այդ մասին մտածելիք չունենալու համար : մինչեւ որ երկիրն միւս մասերը խաղաղի : Լաւանական էր որ թուրքերոյ գաղափար ժամանակ Պուլկարիան առիթն օգտուելով այս կողմէն նետուէր անոր վրայ, ու այս պէս զինքը մահուան դուռը հասցնէր ստիպելով երկու ճակատի վրայ կըռուելի : Երբ որ Սուլթանը բան մը կուտայ, զգոյշ ըլլալու է, որովհետեւ անոր արտայայտած բարեկամական զգացումները միշտ նպատակաւոր են ելած :

Թուրքը դեռ եւս կը յամտի եւ չուզեր ետ քաշել իր զինուորները Պարսկաստանի սահմանազխիսի վրայ գտնուող չեզոք երկրաբաժնէն : Իսկ պարսից կառավարութիւնը յատուտ պատերազմով կը սպառնայ Սուլթանի պատերազմի կը պատրաստուի լսել է՝ մինչեւ մէկ աստիճան նա ապահով է թէ՛ թուրքին պիտի յաղթէ, ինչեւ անոր զինուորական ուժը շատ ստորին է թրքէն : Սակայն պարսիկը ուրիշ յոյս մը ունի : Սահմանազխի վրայ գտնուող, ու տաճիկն պատկանող երկրի բոլոր բնակչութիւնը Շիրակ անկիւնն են, որ կընայ պարսիկ կառավարութեան զրգուժով, որպէս կրօնակից, ապստամբի ու նետուել թուրք բանակին վրայ ու այսպէս զիւրացնել պարսիկ բանակին յաղթութիւնը : Այս իր խաղին մէջ Շահին կառավարութիւնը իր ձեռքը ուրիշ զէնք մըն ալ կընայ ունենալ զուցէ եւ սպառնալ թրքին, այսինքն բանալ իր սահմանները հայերու առջեւ, որ զինուորուած, գոռոն սան զէպի Հայաստան եւ ապստամբութեան զրօշը պարզեն, իսկ ասի թուրքերոյ համար ձեռնադրի երազ մըն է :

Ենթադրելով պատրաստութիւնը օրէ օր ծաւալ կանուխ, թրքական բանակը գլխիցն ոչնչացած ու պաշարուած իսլակորոյս չը գիտեր ինչ ընելիքը Բուրք կուզէ զօրք զրկել վերստին, սակայն փոխադրութեան միջոցներն զժուարին, դրամապէս սնանկ չուրած միացած է, իսկ Ենթադրութեան քիչ համար շատ կարեւոր է, բնաւ երբէք անոր գործին չըզար, արաբական ցեղէն, մահմետական էմիրութեան մը հաստատուիլը սուրբ երկրի մտակայքը :

Հիմայ հակնայի է թէ՛ ինչո՛ւ Անուլանը Պուլկարիան կուզէ՛ սիրաչանել :

2

«Գնիազ Բոյիմիլին» զրահաւորին նոր ապստամբութիւնը

«Գնիազ Բոյիմիլին» զրահաւորին երկրորդ ապստամբութեան համար, հետեւեալ մանրամասնութիւնը կուտան Սեւաստաբոլին : Այս ապստամբական շարժումը տե-

ղի ունեցած է, ծովակալ Չուհնիկի վիրաւորուելէն առաջ, եւ մինչեւ հիմայ զազտնի պահուած :

Նաւաստի մը, վերոյիշեալ զրահաւորին մէջ, իր ընկերներուն յեղափոխական յայտարարութիւնները ցրուած միջոցին կը բռնուի : Սպաները որպէս պատիժ կուզեն զանի զօրանոց ուղարկել, սակայն ասոր բոլոր նաւաստիները կը հակասապին :

Սարսափած, սպաները մարդ կը խրկեն եւ կը կանչեն ծովակալ Չուհնիկը, որ անմիջապէս կը վազէ կուգայ, կը ժողով բոլոր նաւաստիները եւ ճառ մը կը խօսի, որով կը ճգնի անոնց հասկցնել թէ՛ հիմայ Ռուսիան շատ նեղ օրեր կանցնէ՛ իսկ այս դրութեան սկզբնապատճառը՝ հրէշաները, բոլորն արհեստը, հայերը եւ ընկերվարականներն են, որ կուզեն զանի բայ բաժին ընել :

Բանաստուութիւնը վերջացնելով կը յորդորէ նաւաստիները, որ այս թրշնամի շարքերուն չընկերակցին :

— Լիցցուցի՞ք — կը հարցնէ նաւաստին Լէզրով :

— Այո, կը պատասխանէ Չուհնիկը : Այն ժամանակ Լէզրով շարքէն դուրս կուգայ եւ այսպէս կը խօսի :

Ռուսիկան Չուհնիկը, կըսէ թէ, Ռուսիան շատ ներքին թշնամիներ ունի, սակայն ասի իրաւի չէ : Ռուսիոյ ամենամեծ թշնամիները, ասոր պէս խուրիկաններն են, եւ մատնաբոյց կընէ ծովակալը :

Ղինուորները խնդալէ կը ճաթին սպաները կը ձայնեն, Չուհնիկը բարկութեամբ զրոհւար, կը հրամայէ ըմբոս նաւաստին ձերբակալել : Քանի մը նաւաստիներ կուզեն հրամանը կատարել, սակայն միացեալները կը շրջապատեն, եւ պիտի փոխկընեն զանոնք յայտարարելով, «Չենք թոյլտրեր» :

Նաւաստին Լէզրով կրակ կընէ ու կըսպաննէ սպայ Շտայնը : Անգամ մըն ալ կրակ կընէ եւ կը մեռցնէ ծովակալ Բիսաբէլիսին :

Բոլոր սպաները փախուստ կուտան միայն Չուհնիկը կը մնայ, ու ձայնը ելածի շափ կը պոսայ ձերբակալեցէ՛ք, ձերբակալեցէ՛ք : Նաւաստիները իրենց տեղէն չեն շարժիր, իսկ Լէզրով հետեւեալ խօսքերով կը գոռոնայ զէպ իր ընկերները :

— Ի՛նչ, ինչո՛ւ կը կենաք ձերբակալեցէ՛ք զիս :

Քանի մը ենթասպաներ եւ տասնակուսիներ, կանոնն զէնքը եւ զինքը կը ձերբակալեն : միացեալները միաձայն կը կանչին :

— Բեզրովը շատ լաւ բրաւ : Բիսաբէլիսին այդ էր վայել : Նա արեան ծարաւի էր, թող հիմայ էլ թայ իր արիւնին մէջ լողանայ :

Նաւաստիներու գրգռուած վիճակը աչքի առջիւ ունենալով, եւ կըռոնով զալիք հետեւանքը, ծովակալ վազ կանցնի իր քանաւորական մը-տաղորութեան եւ գոհացում կուտայ նաւաստիներու պահանջին, ազատ արձակելով Բէթրովը :

Մ.

ՆԱՄԱԿԱՏՈՒՓ

Կարա-Սիվէն Ս. Վ. Սօֆիա Ձեր նշանակած հասցէին քաֆէ : . . . ուրիճաւ ԴՅՐՊ. զրկուած թերթերը ետ դարձուած են, եթէ այժմու հասցէնիդ ապահով է կատանաք անընդհատ :

Թերթերը կանոնաւոր չստացող բաժանորդներուն կը յայտարարենք որ ուշադրութիւն դարձնեն իրենց հասցէին եւ կամ փոխեն : Յուսատան — Տ. Ա. Տէրտէրեան զրամբ ստացանք ընկալալի կուղարկուի, նշանակեցէ՛ք :

ԴԱՏԱՎԱՐՈՒԹԻՒՆ

ԵՂԵՆՈՒԱԿԱՆ ԱՐԱՐԿԻՆ, ՆԵՂԻՆԱԿԵՐՈՒՆ

ԸՆԴՀ. ԴԱՏԱԽԱՅԻՆ ՃԱՌԸ

(«Մանգու մի-էֆֆրեարուն քաղաքում (Շար. Ասիլուն. քիսիկ)

«Միրելիս Մ. Քիրի» վերնագրով վերջին նամակին հասած օրը ձեզի տուած բանն հոս զրկեցէք նամակը Օն քս հասցէով զրկեցէք Չիս անգամ մըն ալ մտատանջութեան շը մատնելու համար իսկոյն տեղեկութիւն տուէք ։ Եթէ երբէք հիւրդ նաք, առանց զրամը խնայելու անմիջապէս իմացուցէք ինձ, այն ասեան հոս ժողով մը գումարով տարով ձեզի համար ամեն նպատակով միջոցները փնտնել պիտի տամ ։ Ամուսինս և Բուպինա կը բարեկեն զձեզ ։

Այս նամակին առթիւ երբ ժողովէ բացատրութիւն պահանջուեցաւ, պատասխանեց թէ այս նամակը գրուած է ժընէվի Օն քս քաղաքէն տիկին Սօֆի Բիբուս կողմէ որ Լիբա Բիբուս և Թուպինա Ֆայնի հետ հոս կը բը նակի, Քիրին անուը իր ծածկանունն է, որով կը ստորագրէ Եւրոպայի մէջ անիշխանական գաղափարներ արձարձող լրագիրներէ ուման մէջ կրամ իր յօդուածները ։ Տիկին Սօֆի եղեռնական զէպրին օրը վեց հատ ուսական կեդ անցազիր և երբ հատ վեցհարուածան ատրճանակ ձգած ըլլալով ժողովի բնակած արարթըմանը, «ձեզի տուածս ինձ զրկեցէք» ըսելով ասոնք ակնարկել կուղէ ։ Ժորիս յայտարարեց թէ իր ձերբակալուելէն առաջ անցազիրները Անթոն Քօշի զրկած է Ֆիլիպէ, իսկ վեցհարուածաններն ալ տուփի մը մէջ զետեղելով պահած է Սիւնկէր վաճառատունը գերմանահպատակ Մ. Պէշի գրասենեակին մէջ ։ Ժորիս մանրամասն կերպով յայտարարեց թէ ժընէվ գտնուող Դրոշակի յեղափոխական անդամները ժողով մը դուրսարկելով պէտք ունեցած զրամը պիտի փութանք իրեն որպէսզի զիրարացնեն փախուստը, և թէ Ատէլ Պէշի, որուն հասցէն նախապէս պահած էր իր քով և որուն հետ թղթակցելը խոստովանած էր, կը բնակի Օն քս գիւղաքաղաքին մէջ ։ Արդարեւ Սիւնկէր վաճառատան հաշուակալ գերմանացի Մ. Պէշ ինչելով որ ժորիս տուփ մը պահած է իր սենեակին մէջ, յիշելին ձերբակալուելէն վերջ, իրողութիւնը ըստ օրինի հիւպատոսարան ծանուցած է ։ Այսպէս յիշելու տուփը բերուելով քննութեան ենթարկուած և տեսնուած է որ ատիկայ կը պարունակէ վերջին գրութեամբ շինուած երեք հատ կրկնահարուածեան ըզվովէր, ինչպէս նաև շուրջ 400 հատ զնդակ ։

Երբ հարցուեցաւ ժորիսի թէ ինչու համար տիկին Բիբուս ըզվովէրները իր տունը ձգեց, և թէ ինք ինչու զանոնք յիշելին գրասենեակը պահեց, ժորիս պատասխանեց թէ այս հրապէսները Լիբա Բիբուս Թուպինա Ֆայնի ու կառուպան ժորթ գնած էին եղեռնական զէպրին օրը և իրենց վրայ կը կրէին վանոնք յէպրեին օրը եթէ զիրենք ձերբակալուածներով մը ըլլար որչա՞ռ էին անձ նապաշտպանութեան համար՝ զիրենք ձերբակալել փորձողները սպաննելու սակայն քանի որ պէտք չէին տեսած

զանոնք գործածել, իրենց փախուստի պահանջը զգուշութեան համար զանոնք իր տունը ձգած են ինքն ալ զանոնք ծրարի մը մէջ փաթթելով տարաւ Սիւնկէրի վաճառատունը և Մ. Պէշի գրասենեակը դրաւ ։

Յիշատակուած Ատէլ Պէշիէն նկատուածաբ անհրաժեշտ եղած քննութիւնները կը կատարուէին, միւս կողմէ հետզհետէ կը հասնէին Պուլկարիոյ քոմիտէի թեան պատասխանները՝ Ֆիլիպէ Անթոն Քօշի Երուանդ Ալաճաճեանի և Թադեոս Երուանդի նկատմամբ եղած հարցումներուն Ատէլ Պէշիէ անուն կինը Չուիցերիոյ Օն քս զուգարաքը կը բնակէր և զէպրէն անմիջապէս ետք Դուրիսեան Միբուս անուն անձ մը որի ինչ մը կինը հետ հետ իր բնակութիւնը հաստատած էր այս Ատէլ Պէշիէի քով ։ Բիբուսի զիմացիները կատարելապէս կը համապատասխանէին յիշեալ Դավրիսեանի զիմացիներուն հետ Անթոն Քօշ անուը կրող անձը բուն իսկ Ալաճաճեանն էր որ Ֆիլիպէ կը բնակէր ու Հայ յեղափոխականներու խոսովարարական գործերը կը վարէր Թագուրեան Յակոբ Սօֆիայի, իսկ Ալաճաճեան Երուանդ ալ՝ Ֆիլիպէի մէջ մէկ մէկ վաճառատուն բացած էին և վաճառականութեան քողին տակ հայ յեղափոխականներուն հետ յարաբերութիւն հաստատած էին Քննութեամբ հաստատուեցաւ թէ յիշեալ Երուանդ և Թագուր, մեծ գումարներ զրկած են Պուլիս այս տեղի յեղափոխական մասնաճիւղին գործերն ու ծրագիրները յաջողութեամբ համար Քննութեամբ հաստատուած է նաեւ որ Լիբա Բիբուս, իր կինը ենթադրուած Տիկին Սօֆի Բիբուս և Բուպինա Ֆայնի հիմայ կը գտնուէին Չուիցերիոյ Օն քս գիւղաքաղաքէ Ատէլ Պէշիէի մաս ։ Թիւսաւ Եւրոպայի մէջ ժողովով կամ Արտաշ Գարուսեանեան ալ Թուսուոզ Հայկ Մալազանի քով կը գտնուէ, ինչ որ վերջերս իր ընտանիքին զրկած և ձեռք անցուած նամակէ մը հասկցուած է ։ Ժորիսի կինը Աննա Նէլլէն ։ Ինչպէս ժորիս ալ կը խոստովանէր Ֆիլիպէ Անթոն Քօշի քով կը գտնուէ կառուպան Մկրտիչ Ամուլիկա փախած է, ինչպէս հասկցուած է իր կողմէ ամբաստանեալ Յովսէփի զրկուած մէկ նամակէն ։ Իսկ ձիւղարման Երուանդ Ֆրանկի, իւր հիմա վառնա սափրիչ Մկրտիչ Տէր Խաչատուրեանի քով կը գտնուէ, ինչպէս հաստատուած է ժորը զրկած մէկ նամակէն ։ Սիւնկէր, Բիբի, այսինքն վաճան, զէպրէն օր մը առաջ Պուլէն Պիրէնի փախած ու յետոյ իր ծննդավայրը Ֆիլիպէ գացած է ։ Անթոն քօշ և Երուանդ Ալաճաճեան Ֆիլիպէի իսկ Թագուր Յակոբեան Սօֆիայ կը գտնուէին ։ Տիկին Ալաճաճեան ալ այսինքն Անթոն Օտէսա կը գտնուէ ինչ որ հաստատուած է իր մէկ նամակէն ։ Փախուսականներէն կոչկոկար Արշակ, Գարեգին և Յովակիմ ալ Պուլկարիա փախած են ։ Արշակ իր ընտանիքին զրկած մէկ նամակէն հասկցուած է որ անկա վերջերս Պուլէն գացած է ։ Գարլ Երուանդովիչ Աշոտ այսինքն բուն անունով Յովհաննէսեան Նիդալի որդին կարապետ ալ Պուլկարիա կը գտնուէ ։ Այս ամբաստաններուն Պուլիս մէջ կազմած յեղափոխական մասնախումբին միջոցաւ հետապնդել ծրարած եղեռնական արարքներուն ու անիմապարտ ոճիրներուն ծագումն ու գործադրութեան եղանակը ամբողջ մանրամասնութեամբ պարզեցի ու

վերլուծեցի ։ Այժմ կը մնայ գիտնալ և ճշգրի իւրաքանչիւրին այս եղեռնական գործին մէջ ունեցած մասնակցութեան չափը ։ (Շարունակելի)

ՎԱՐԴԱՆԱՆՑԻ ՏՕՆԸ

Հոգարարձութիւնս կը փութայ յայտարարել արգոյ Հայ հասարակութեան թէ՛ յառաջիկայ հիւղաքաղաքի օր մեր ազգային կեանքի եւ անոր պատմութեան է՛ն մեծ եւ յուզիչ զէպրին տարեդարձին առթիւ, յետ սուտրաման Ս պատարագի Հանդէս պիտի կատարուի եկեղեցոյ մէջ, որ զպրոցի սաներ պիտի երգեն եւ որ ինչնեւ ալ պիտի խօսին օրուան նըշանակութեան վրայ ։

Օտարութեան ծոցին մէջ եւ մեր այս դժբաղդ օրերուն պէտք ունենալով աւելի եւ ալ աւելի վառ եւ թարմ պահելու մեր սրտերուն մէջ այսպիսի նշանակելի օրուան մը յիշատակը եւ անկէ դաս առնելու, կը հրաւիրեմք Տեղուոյ Հայութիւնը որ հաճի ի նշան յարգանքի գոնէ մինչեւ կէս օր գոց պահել իրենց խանութները եւ պարտականութիւն յանձն առնէ խմբովին ներկայ լինելու կատարուելիք հանդէսին ։

Ի գիմաց Հոգարարձութեան Ազգ. վարժարանաց Ատենադպիր Ատենապետ Ս. Հաճօեան Փ. Հալաճեան

Հոգարարձութիւնս կը փութայ ծանուցանել արգոյ Հայ հասարակութեան թէ ի նպատակ Ազգ. վարժարանաց տրուելիք պարահանդէսը տեղի պիտի ունենայ յառաջիկայ օրը թաթ գիշեր 10 փետրուար, Ձրնուորական Կիւլիպին մէջ ։

Յուսով եմք որ պատուաբան ազգայինք բազմութիւ աղբատ եւ որք մանուկներու կրթութեան գործը ապահովելու մեր այս ձեռնարկը պիտի հաճին քաջալերել իրենց օժանդակութեամբ ։

Տոմսակներու գիներն են Ըստ կամս եւ 10 ֆր ։

Ի գիմաց Հոգարարձութեան Ազգ. վարժարանաց Ատենադպիր Ատենապետ Ս. Հաճօեան Փ. Հալաճեան

ՆԱՄԱԿ ԽՄԲ ԳՐՈՒԹԵԱՆ

Տէր Խմբագիր, «Նարժում» շրեքաքաղաքի օրուան թիւով հրատարակուած յօդուածիս մէջ գրութեան իմաստը փոխող հետեւեալ սխալը սպարած է ։ փոխանակ՝ «ընկերութեան 72 անդամներէն 28 ին 33 ձայնով որոշուեցաւ» տպուելու «ընկերութեան 72 անդամներէն 28 ին 33 ձայնով որոշուեցաւ» հրատարակուած է ։ Հոս բացատրութիւն մը ։ 26. ազգրին մէջ ինչպէս որ գրուած է 28 վերակազմեալները 11 ձայն ալ ժողովէն բացակայ անդամներէն բերած էին, ու անոնց անունով ալ քուէ տուին ։ Ճշմարտութիւնը խեղաթիւր

ուած չըլլալու ու խմբանքի տեղի չը տալու համար կը խնդրեմ հաճեցէք «Նարժում» յառաջիկայ թիւին մէջ ճշգրի այս սխալը Անգամ մը (°)

3 Փետրվ 1906 Վառնա

(°) Սոյն նամակը ուչ հասած ըլլալով չի կրցանք նախորդ թիւով հրատարակել ։ Ը. Մմբ.

«ՆԱԿԱԿԱՆ» ԲՆԹԵՐՏԱՐԱՆԸ

Հակառակ մէկ քանիներու սխալ տարածանութեանց «Հայկական» ընկերացարանը ինչպէս ցարդ նոյնպէս և յետոյ յայտարարելու հակառակահայ նեղ հայեցողութիւն և նկատմանը զերծ, պիտի շարունակէ իր դոյութիւնը, իրեն միակ նպատակ ունենալով՝ օգտակար ըլլալ տեղուոյ հայ հասարակութեան ամեն դասակարգին ։

Ընթերցարանին հիմնական կանոնագրին մէկ յօդուածը որ կը տրամադրէր ընթերցարանի քաջքայման պարագային գոյքերը, հիմնադիրներու որոշմամբ բարենպաստակ հաստատութեան մը յատկացնել, մէկ քանիներու շարունակական քաջքայման անորակայ եղած և անոր բարեփոխութիւնը պահանջուած ըլլալով, վերջին ընդհ. ժողովոյ մէջ, կարծեաց փոխանակութիւններէ յետոյ, որոշուեցաւ 10 ձայնի դէմ 39 ցայնով «ընթերցարանի քաջքայման պարագային անոր գոյքերը վերակազմելու կուսակցութեան յատկացնել» ։

Այս որոշումը կը ցաւինք որ անշան փոքրամասնութեան մը կողմէ կրկին կը քաջքուրի ։ Բայց սոսա երբէք չը կրնար ընթերցարանի գիրքը եւ անոր ժողովրդային ուղղութիւնը փոփոխել կամ խանգարել ։

Ի գիմաց «Հայկական» Ընթ. Առժ. Մասնախմբի (Կնիք)

Շ Ր Ջ Ա Բ Ե Ր Ա Կ Ա Ն

Հայ ոչ-յեղափոխական ընկերութեանց վարչական ժողովներուն

Բոլոր ոչ-յեղափոխական ընկերութեանց մէջ յարաբերութիւն հաստատելու և ապագային նոյն իսկ պատգամաւորական ժողով գումարելու դիւրութիւն ընծայելու համար, Բարիկ Հայ Աշխատ. Միութեան վարչական ժողովս կը խնդրէ բոլոր ոչ-յեղափոխական ազգային ընկերութեանց վարչական ժողովներէն որ, եթէ կարելի է, մինչեւ երկու ամիս, բարեհաճին իրեն զրկել իրենց պաշտօնական հասցէն եւ մէկ օրինակ կանոնագիր ։

Վարչական ժողովս հրատարակութեան պիտի տայ իրեն հասած ընկերութեանց անուններն ու հասցէներն ի գիտութիւն բոլոր միւս ընկերութեանց և պիտի զրկէ ամէնուն մէկ օրինակ իրեն կանոնագրէն ։ Միութեանս հասցէն է— Առ պարոն Նախագահ Բարիկ Հայ Աշխատաւորաց Միութեան, 96 պըտ փիքփիա Բարիկ Հայ Աշխատ. Միութեան Վարչական ժողով 26 Յունվար 1906 (Կնիք)

ԱՅՂԱՆՆԵՐՆ ԱԼ ՀԱՅՈՑ ԴԵՄ

Ընդհանրապէս կովկասի դէպքերէն ազդուած, և մասնաւորապէս պարսիկներէն թելագրուած, Թախտապազարի աֆղաններն ալ ոտքի նլեր էն վրէժ լուծելու հայերէն, որոնց յանցանքը, աւելորդ է ըսել, իրենց հայ ըլլալն է միայն:

Թախտապազար կոչուած վայրը կը գտնուի Ռուսաստանի և Աֆղանիստանի սահմանադիմին վրայ, և ուսաց ձեռքն է:

Այն տեղ հայերը մինչև վերջին ժամանակներս հանգիստ կապրէին: Բայց ահա՛ ուսս տիկան մը, իրեն հետ կուռի բռնուող պարսիկ մը կ'սպաննէ, և պարսիկները շարամտաբար այդ սպաննութիւնը հայերուն վերագրելով կը գրգռեն տեղացի աֆղանները՝ որոնցմէ մէկը կերթայ հայ խանութ մը կը մտնէ, և կուռ կառաջացնէ: Հոն գըտնուող հայերը, այդ աֆղանը բռնելով կը յանձնեն պահապան աֆղանին, որ ոտտիկանութիւն չը հասած, աղատ կարձակէ յանցաւորը: Այս վերջինը անմիջապէս հաւաքելով իր ընկերները, կը յարձակի հայերուն վրայ, որոնք կաշխատին գործը քաղցրութեամբ ու հաշտութեամբ վերջացնելու Բայց 200 հոգիէ բաղկացած աֆղան ամբոխը կը շրջապատէ հայերը ու կը սկսի քարկոծել:

Հայերէ մէկը, այդ միջոցին, զէնքի դիմելով, իր ատրճանակը օդը կը պարպէ, և աֆղանները, երբ ատրճանակի ձայնը կը լսեն, կ'սկսին փախչիլ:

Քանի մը հայ, քարկոծումէն սաստիկ վիրաւորուած, կ'ընան գետին, և անոնցմէ մէկն ալ կը մեռնի:

Բարեբաղդաբար զէպքէն քիչ մը վերջ քաղաքները կը հասնին, և կը զսպեն աֆղանները, որոնք կը պատրաստուէին նոր ուժով ու զէնքերով յարձակիլ հայերուն վրայ, զանոնք կոտորելու համար:

(Պէտքերս)

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ք Ո Ւ Ր Բ Ի Ա

Պէլճիգական գործակատարութիւնը նոր ազգագիր մը ուղղած է Բ, Դրան, որով կը պնդէ Ժորիսի յանձնումը:

Պօլսոյ մէջ լուր կը շրջի թէ՛ Արաբացի ապստամբները, որ շատ մը խորտընկէցներ ունին իրենց տրամագրութեան տակ, նոր յաղթութիւն մը տարած են, և երկու թիւրք զօրավարներ սպաննած են Սանաաի կուռին:

մէջ: Սանաան շատ մօտէն պաշարուած է, կը կարծուի թէ քիչ օրէն անձնատուր պիտի ըլլայ:

Չինուորական նախարարը Սուլթանին նոր տեղեկագիր մը տուած է, որով 1 միլիոն լիրա և 50,000 շինուոր կուզէ Եւմէնի ապստամբութիւնը խաղաղեցնելու համար:

Միջազգային ելեմտից յանձնախմբի պատուիրակները Հիւլի բաշային, Սէլանիկի, Պիթոլիոյ և Գոսովայի կուսակալներու ամսականները պակասեցուցած են: Կը կարծուի թէ երբեմնի և արդի ամսականներու տարբերութիւնը Բ. Դըւըը ինքը պիտի վճարէ:

Միջազգային ելեմտից յանձնախմբի որոշեց Մակեդոնիոյ ընդարձակ անտառները շահագործելու և այսպէս շատ մը միլիոն ֆրանքներ գոյացնել կը կարծէ:

Յիւլի բաշայի բանակին համար նշանակուած 21 զինուորական բժիշկներ, Եւմէն երթալ մերժեցին:

Պաղատաի հիւպատոսները կիմացնեն թէ՛ թրքական իշխանութիւնը հետզհետէ կը կորսնցունէ իր նշանակութիւնը Պաղատաի ինչպէս նաև մօտակայ քաղաքներու մէջ: Լուրջ ապստամբական շարժումներ սպասելի են, իոկ այս պարագային մէջ օտար տէրութիւններու միջամտութիւնը անխուսափելի է:

Պիւլիպիլիցի Բրէսին Պօլսէն կիմացնեն թէ՛ Անգլիոյ՝ Բ. Դրան ըրած խոստումներուն հակառակ, Թուրքիոյ և Եգիպտոսի միջև, Ապահաի սահմանին վրայ տեղի ունեցած միջադէպը տակաւին կարգադրուած չէ: Անգլո-Եգիպտական զինուորորդ յառաջ խաղալու համար պատրաստակալ էն: Անգլիական հառափարութիւնը երկու զրահաւոր զբկած է Թարաօն կղզեակը պաշտպանելու համար, զոր թրքերը կը պատրաստուին գրաւել:

Երկու պետութիւններու յարաբերութիւնները շատ լարուած են: Տի ձիօրճիօ բաշան Սակեդոնիոյ մէջ գտնուած եւրոպական օստիկանութեան ներկայացուցիչները հրաւիրած էր խորհրդակցելու համար:

Իրեն նախագահութեամբ խորհրդակցութիւնները տեղի ունեցած են արդէն, և ամէնքը վերստին իրենց պաշտօնատեղին վերադարձած:

Այս խորհրդակցութեանց որոշումները շատ գաղտնի կը պահուին, սակայն ամենաէականը կը կարծուի թէ հետեւեալ երեք որոշումներն են:

1) Պահանջել են թաւապաներու քանակութեան յաւելումը, որով:

հետեւ արդի եղած սպաննելով կարելի չէ յանձնարարուած պաշտօնի գլուխ հանել:

2) Դատարանները և ընդհանուր առմամբ թրքական իշխանութիւնը լուրջ ուշադրութիւն դարձնէ, ամէն տեսակ քննութիւններու առթիւ այս սպաննելու ներկայացուցած տեղեկագրերուն, որպէս վաւերացողներ:

3) Հրամանատարութեան իրաւասութեան որոշումը:

Թէև ամէն մարդ համոզուած է թէ՛ այս որոշումները բուռն ընդգրկմագրութեան պիտի հանդպին Հիւլի բաշայի և Բ. Դրան կողմանէ: Սոսկիսի միջադէպ մը անցեալ տարի ալ տեղի ունեցաւ Տի ձիօրճիօ և Հիւլի բաշայի միջև, անցեալ տարի Հիւլիին յաղթանակեց, տեսնելք հիմայ:

Ո Ո Ւ Ս Ի Ա

Պագուէն կիմացնեն թէ՛ քաղաքապետութիւնը իր բոլոր պաշտօնեաները ճամբած է, անոնց ամսականները վճարելու կարողութիւն չունենալուն համար: քաղաքապետութիւնը փախառութիւն մը կ'ընել փորձած է բայց չէ յաջողած:

Կործադուր վերջացած է ու քարիզի հիմնարկութիւններու մէջ գործը վերսկսած: Լրագիրները սկսած են հրատարակուիլ:

Երկրագործութեան նախարար Գուդէրը հրամարականը տուած է, իր առաջարկած ծրարագրին շնորհիւ և հետեւանօք, որով նա կառուարկէր բռնի կերպով մեծ օգտակար պետներէ հողեր առել ի նպաստ գիւղացիներուն: Չայն փոխանակող Գրիվոնիլիցիները, կուսակից է այն գաղափարին, որով կուռուի գիւղական հարցը լուծել, Եւրոպական Ռուսիոյ գիւղացիները Ասիական երկրի վրայ գաղթեցնելով:

Ինլիթալայէն իմացնեն թէ՛ այս քաղաքի բանտին մէջ կալանաւորուած 62 քաղաքական յանցաւորները, բանտին վերատեսչին հրամանով խարազանուած են: Բանտարկեալները կամաւոր անօթութեամբ որոշած են այս բարբարոսութեան դէմ բողոքել, անոնց մէջ կան փաստաբաններ և երկրաչափներ:

Արդարագատութեան նախարարը այս մասին խիստ քննութիւն մը բացած է:

«Էլչանժ թէլէկրաֆին» Բեդերպուրկէն կիմացնեն թէ՛ Թուսական կառավարութիւնը, Չինաստանի հետ մանուածապատ գրութեան մէջ չիյնալու համար, որոշած է Մանչուրիոյ մեծագոյն մասը թողուլ ու քաշուիլ:

«Սոլովսին» գրածին նայելով ձարոնիան, Անգլիան, Չինաստանը

տանը Ռուսիոյ՝ դէմ զինել կը ձգնին:

Բեթերպուրկէն հասած լուրերու համաձայն, կոմս Վիթթի կեանքի դէմ նիւթուած մեծ դաւադրութեան մը հետքեր գրտուած է: Ոտտիկանութիւնը այս մասին քննութիւն մը բացած ու 13 հոգի ալ ձերբակալած է:

ՍԵՐՊԻԱ

Աւստրո-հունգարական կառավարութիւնը, Սերպո-պուլկար Մայսային համաձայնութեան անընդունելի կէտերը՝ Սերպական օտարութեան գրտուոր կերպով իմացուց:

ՍՐԱՀ ՊՈՒԼԿԱՒԻԱ

1906 Փետրուար 9 հինգշաբթի գիշեր ժամը ճիշտ 9ին հայերի տասարդ. «ՄԱՍԻՍ» խմբի կողմանէ պիտի ներկայացուի «Մեծն Վարդան Մամիկոնեան» ի նպաստ Պօսիօն հրատարակուող «Արմէնիա» թերթին:

ՍՐԱՀ ՍՍԵՏԻՆԵՆԻԷ

1906 Փետրուար 8ին այսօր, երեկոյան ժամը ճիշտ 8 1/2 ին արտաքոյ կարգի շքեղ ներկայացում «ՄԱՍԻՍ» Թատերասէր խմբի կողմէ ի նպաստ Խարբերգի երկրաչարժի արկածելոց Առաջնորդութեամբ կարգադրելու Մասնախմբի առաջին անգամ ըլլալով ԲՈՂՈՔԱԴԻՐԸ երգախումբ ողբերգութիւն 3 արար. և 2 պատկեր, հեղինակ Ա. Շիտանեանի. երկրորդ անգամ ըլլալով ըստ խնդրանաց թատերասիրաց պիտի ներկայացուի ԳՐԱԻՈՒՄԸ Ողբերգութիւն 4 արար և մէկ պատկեր:

Ա Ձ Դ

Ֆիլիպի եւ չրվակայ հայ հասարակութեան կիմացնեմ թէ՛ «Դըրպանի» Ազգային Հիւանդանոցի օրացոյցներ կը ծախսւ խիստ առատ գիներով որոնք են:

Ֆիլիպի համար գրպանի 40 սնթ. « Դուրս գրպանի 45 « Փօստի ծախքը մեր վրայ Փոխարժէքը նամակագրոյմ ալ կընդունուի Հասցէ՝ Նշան Տուճանեան Ֆիլիպի 3-3

«ԱՒՐՕՐԱ. Ռուսական թերթ, Ռուսներէն լեզուով. Հասցէ՝ Խմբ. «Աւորաբայի Պուքարկսթ, Րուսախա Սթրատա Սրաթարիլիւի. 45